

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍԵՐ

20.05.2011թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Անանյանը, Գ. Գևորգյանը, Յու. Պողոսյանը, Ա. Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ Գ. Հովսեփյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ.Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ Գ. Թորոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ա. Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության բաժնի առաջատար մասնագետ Վ. Արևշատյանը, մարդահամարի վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրավորման բաժնի պետ Ռ.Հովհաննիսյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Հեռուստառադիոծրագրերի կազմման և հեռարձակման, հեռահաղորդակցության գործունեությունից ստացված եկամուտների մասին» Ձև թիվ 13-ԿԱՊ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և ՀՀ ՎՊԽ 2010թ. հուլիսի 7-ի թիվ 22-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու» մասին հարցը:

/Ջեկուցող՝ Գ.Թորոսյան/

Որոշվեց՝

Հաստատել «Հեռուստառադիոծրագրերի կազմման և հեռարձակման, հեռահաղորդակցության գործունեությունից ստացված եկամուտների մասին» Ձև թիվ

13-ԿԱՊ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը և ուժը կորցրած ճանաչել ՀՀ ՎՊԽ 2010թ. հուլիսի 7-ի թիվ 22-Ն որոշումը»:

/Նորմատիվ/

2. «ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2011 թվականի փետրվարի 28-ի «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2008 թվականի հունիսի 2-ի թիվ 17-Ա որոշումն ուժը կորցնելու և Արժույթի միջազգային հիմնադրամի «Տվյալների տարածման հատուկ ստանդարտի» «Տվյալների որակի գնահատման շրջանակի» պահանջներին համապատասխան մշակված մեթատվյալների հաստատման մասին» թիվ 06-Ա որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի «Սպառողական գների ինդեքս և արտադրողների արտադրանքի գների ինդեքս» մեթատվյալների խմբերում փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ. Պեպրոսյան/

Որոշվեց՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2011 թվականի փետրվարի 28-ի «Արժույթի միջազգային հիմնադրամի «Տվյալների տարածման հատուկ ստանդարտի» «Տվյալների որակի գնահատման շրջանակի» պահանջներին համապատասխան մշակված սպառողական և արտադրողների արտադրանքների գների ինդեքսների մեթատվյալների խմբերում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

/Անհատական/

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին

3.1. Հաղորդում՝ Կորեայի Սեուլ քաղաքում 2011 թվականի ապրիլի 6-ից 7-ը Ասիական զարգացման բանկի, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության, Կորեայի տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից կազմակերպված «Սոցիալական պաշտպանության ինդեքսի արդիականացում և կատարելագործում» խորագրով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/

3.2. Հաղորդում՝ Տաջիկստանի Դուշամբե քաղաքում 2011 թվականի ապրիլի 21-ին «Տաջիկստանի վիճակագրության գործակալության և ABB կազմակերպության

կողմից կազմակերպված մարդահամարի արդյունքների սկաներային մուտքագրմանը նվիրված կյոր սեղան» աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ռ. Հովհաննիսյան/

3.3. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2011 թվականի ապրիլի 27-ից 29-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի «Կանանց դեմ բռնության ուսումնասիրություն» խորագրով տարածաշրջանային աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Գ. Գևորգյան, Լ. Պետրոսյան/

3.4. Հաղորդում՝ Հունգարիայի Հանրապետության Բուդապեշտ քաղաքում 2011 թվականի մայիսի 9-ից 13-ը ՄԱԿ-ի Պարենի ու գյուղատնտեսության կազմակերպության (FAO) տարածաշրջանային աշխատանքային ծրագրի շրջանակներում կազմակերպված «Գյուղատնտեսական արտադրության և առևտրի վիճակագրություն» խորագրով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա. Պետրոսյան, Վ. Արևշատյան/

Որոշվեց՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունելի գիտություն:

/Անհատական/

28.06.2011թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Անանյանը, Յու. Պողոսյանը, Վ. Դավթյանը, Ա. Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ. Գրիգորյանը:

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ Գ. Հովսեփյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ. Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը, ՀՀ

ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Առուշանյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի առաջատար մասնագետ Ա. Ավետիսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի գլխավոր մասնագետ Մ. Երիցյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի առաջատար մասնագետ Կ. Ավետիսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ Գ. Թորոսյանը:

Նիսպում լավեցին հեղեղայլ հարցերը.

1. «Արտադրանքի դասակարգում՝ ըստ գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի նախագծին հավանություն տալու» մասին հարցը:

/Զեկուցող՝ Լ. Պետրոսյան/

Որոշվեց՝

Հաստատել

1. «Արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի» նախագիծը՝ համաձայն հավելվածի:

2. «Արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի» նախագիծը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել ՀՀ էկոնոմիկայի նախարարին՝ հաստատման:

/Անհատական/

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1. Հաղորդում՝ Վրաստանի Հանրապետության Թբիլիսի քաղաքում 2011 թվականի ապրիլի 19-ից 21-ը Համաշխարհային բանկի հրավերով կայացած «Աղքատության մոնիթորինգի վերաբերյալ փորձի փոխանակում» խորագրով տարածաշրջանային աշխատանքային հանդիպում սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա, Ա. Առուշանյան/

2.2. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2011 թվականի մայիսի 16-ից 18-ը «Միգրացիա և դրամական փոխանցումներ» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա. Ավետիսյան/

2.3. Հաղորդում՝ Վրաստանի Հանրապետության Թբիլիսի քաղաքում 2011 թվականի հունիսի 5-ից 11-ը 2011թ. ցուցանիշներով միջազգային գլոբալ համադրումների ծրագրի շրջանակում, «Համապատասխան 2011-2013թթ. համար աշխատանքների կատարման ժամանակացույցի, 2011թ. առաջին եռամսյակի գնային դիտարկումների արդյունքներով սպառողական ապրանք-ծառայությունների գների երկկողմանի համադրումների աշխատանքների իրականացման և ներդրումային ապրանքների, շինարարության բաղադրատարրերի դիտարկման համար ապրանք-ներկայացուցիչների ընտրանքի, դրանց քննարկման և համաձայնեցման նպատակով կազմակերպված» երկկողմանի աշխատանքային քննարկմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Գ. Մարտիրոսյան, Մ. Երիցյան, Կ. Ավետիսյան/

2.4. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2011 թվականի հունիսի 14-ից 16-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Եվրոպայի վիճակագիրների 59-րդ հերթական կոնֆերանսին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ս.Մնացականյան/

2.5. Հաղորդում՝ Հունաստանի Աթենք քաղաքում 2011 թվականի հունիսի 21-ից 23-ը Եվրամիության վիճակագրական ծառայության կողմից կազմակերպված «Որակի հարցերը վիճակագրությունում» խորագրով բարձր մակարդակի սեմինար հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ս.Մնացականյան, Ա.Սաֆյան/

2.6. Հաղորդում՝ Ուկրաինայի Կիև քաղաքում 2011 թվականի հունիսի 8-ից 9-ը «Հավասարակշռված և առողջ քաղաքային տրանսպորտի զարգացման համար համագործակցություն» խորագրով սեմինար հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Գ.Թորոսյան/

Որոշվեց՝

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն:

/Անհատական/